ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 հուլիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

110
(2776)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲԱՑՕԹՅԱ ՍՐՃԱՐԱՆ. ՎԱՅԵԼՔՆԵՐ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հայրենի իշխանությունները որոշել են խորհրդարանը վերածել ժամանցի վայրի: Իշխող քաղաքական ուժի նախաձեռնությամբ՝ ԱԺ բակում բացօթյա սրճարան կբացվի: Թե որքանով է արդյունավետ ծախս անել եւ մի քանի ամիս աշխատելու համար բացօթյա սրճարան կառուցել, դժվար է ասել: Համենայնդեպս, ԱԺ ճաշարանի աշխատակիցները մշտապես դժգոհում են քիչ առեւտրից: Այս օրերին ԱԺ-ում վերանորոգման աշխատանքներ են ընթանում, ԱԺ բակը քարուքանդ են արել, որպեսզի բացօթյա սրճարան կառուցեն: «Արմլուր»-ի տեղեկություններով՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հանձնարարել է, որ մինչեւ ԱԺ նոր նստաշրջանի մեկնարկը՝ սեպտեմբերը, սրճարանն արդեն պատրաստ լինի: Հավանաբար խորհրդարանականները որոշել են աշխատանքը համատեղել ժամանցի հետ. երբ շատ աշխատելուց հոգնեն, իջնեն դուրս՝ ԱԺ սրճարան՝ հանգստանալու եւ սրճելու: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԱԺ հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության պետ Լաուրա Անտոնյանին՝ հասկանալու, թե ինչ նպատակով եւ ինչ միջոցներից, որքան գումար է ծախսվում սրճարանը կառուցելու համար, բայց դեռ արձագանք չկա: Տեղեկացանք, որ լրատվական ծառայության ղեկավար Լաուրա Անտոնյանը, ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը, պատգամավոր Հասմիկ Հակոբյանը եւ ԱԺ նախագահի խորհրդական Աշխեն Հայրապետյանը մեկնել են Հունաստան՝ հանգստի: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Իբիցայում է եւ հրապարակավ կարծիքներ է հավաքում իր նոր ակնոցի վերաբերյալ՝ «Սազո՞ւմ է»: Այո՛, սազում է, գնե՛ք, միայն այլ գնումներ չցուցադրեք:

Հ.Գ. Ուշ երեկոյան ԱԺ հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության պետ Լաուրա Անտոնյանը մեզ փոխանցեց, որ այն լինելու է բացօթյա ճաշարան:



Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի շրջապատի որոշ ներկայացուցիչներ ջանք չեն խնայում համոզելու, որպեսզի վերջինս հայտարարի Երեւանի ավագանու ընտրություններին մասնակցելու մասին: Ըստ մեզ հասած լուրերի՝ այս առումով հատկապես ակտիվ են նրա նախկին խոսնակ Հակոբ Կարապետյանն ու Արտակ Գասպարյանը՝ Արտաչոկը, որը նախկին «կավեենշիկ» է ու հայտնի է Ռուսաստանում իր կապերով (նա կարճ ժամանակ զբաղեցրել է նաեւ Նիկոլ Փաշինյանի՝ հասարակական հիմունքներով խորհրդականի պաշտոնը): Ըստ շրջանառվող լուրերի՝ Հայկի քաղաքական թիմի ու ավագանու նույնիսկ նախնական ցուցակ կազմելու հարցում են դժվարանում. գործընթացն ընթանում է շատ դանդաղ ու անհաջող. նույնիսկ Մարությանի շնորհիվ հանկարծ լուրջ պաշտոն ստացած մարդիկ են ցրվել տարբեր կողմեր ու չեն ցանկանում կոմֆորտ գոտուց դուրս գալ եւ դառնալ ընդդիմություն այս իշխանություններին, կարճ ասած՝ «թռել են Հայկի թիմից»: Հանրային կարծիք ուսումնասիրող ընկերություններից մեկի մեր աղբյուրը փոխանցեց, որ Հայկ Մարությանի կողմից թեկնածությունն առաջադրելու մասին հայտարարությունն ուշացնելն արդեն իսկ լրջորեն ազդել է նրա վարկանիշի վրա, մասնավորապես՝ անցած շաբաթ անցկացված հարցումները ցույց են տալիս, որ նրա վարկանիշը գրանցել է ամենացածր մակարդակը՝ վերջին երկու տարիների նմանատիպ հարցումների համեմատ, ու օգոստոսին, ամենայն հավանականությամբ, նա այլեւս չի լինի երկրորդ տեղում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանը վերջապես ներկայացել է Հակակոռուպցիոն կոմիտե եւ հարցաքննվել է: Հիմա գնդակը կոմիտեի դաշտում է. տեսնենք, թե ինչ կանի կոմիտեն Թորոսյանի հետ, եւ ինչ է սպասվում նրան: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Հակակոռուպցիոն կոմիտե, որտեղից դարձյալ չմեկնաբանեցին Թորոսյանի հարցաքննության վերաբերյալ տեղեկությունները՝ նշելով, որ որեւէ քրեական վարույթով իրականացվող հարցաքննությունների կամ հարցաքննված անձանց վերաբերյալ տվյալներ չեն հրապարակում: Հիշեցնենք, որ դեռեւս հունիսի 30-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ծանուցումը հասել է ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանին, սակայն նա դեռեւս չի ներկայացել նախաքննական մարմին: Արսեն Թորոսյանը, որն օրումեջ հայտարարում էր, թե պահանջում է իրեն հարցաքննել, չէր ներկայանում ՀԿ: Հիմա գնացել է ու թերեւս պարզաբանել, թե ինչպես են ծախսվել «Քովիդ 19»-ի կանխարգելման համար նախատեսված գումարները, ով ում քավորությամբ է տարբեր ծախսեր իրականացրել պետության հաշվին:

Օրեր առաջ՝ հուլիսի 26-ին, անհետ կորած զինծառայողների ծնողները փակել էին Պռոշյան - Բաղրամյան պողոտան, եւ այդ խառնաշփոթ իրավիճակում «Մայբախ» մակնիշի մեքենան վթարի ենթարկեց պարեկին: Ավելի ուշ «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 01PO 011 համարանիշով, «Մայբախ» մակնիշի մեքենան պատկանում է Կառուցապատողների հայկական ասոցիացիայի հիմնադիր եւ խորհրդի անդամ Վահե Պետրոսյանին, սակայն ղեկին եղել է Վահե Պետրոսյանի վարորդը: «Ժողովուրդ» օրաթերթին հասել են այլ ուշագրավ տեղեկություններ Վահե Պետրոսյանի մասին: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Պետրոսյանի կինը ունի երեք քույր, որոնց ամուսինները ոչ պակաս հանրաճանաչ դեմքեր են. Վահե Պետրոսյանը ՀՀ նախկին վարչապետ Կարեն Կարապետյանի եւ ԿԲ փոխնախագահ Ներսես Երիցյանի բաջանաղն է: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները, որոնք քաջատեղյակ են Վահե Պետրոսյանի վարած կյանքի մանրամասներից ու անձնապես ճանաչում են նրան, վերջինիս որակում են որպես հարցերը ներքին կարգով լուծելու ունակ կերպար: Ավելին՝ Բաղրամյան պողոտայում վրաերթի ենթարկված պարեկի դեպքը Պետրոսյանի համար հերթականներից է, եւ հեշտությամբ հարցը կարող է փակվել առանց աղմուկի:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԻ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒՄ Է

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի «Միասնական հայրենիք» կուսակցության պատգամավոր Սեյրան Հայրապետյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում խոսել է Արցախի ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանի հրաժարականի լուրերի եւ հումանիտար բեռները տեղ հասցնելու մասին:

-Ես կարող եմ Արցախի Հանրապետությունում ընդհանուր սոցիալական իրավիճակը ներկայացնել. օր օրի ամեն ինչ բարդանում է: Սա ասել ենք նաեւ մեր պաշտոնական հաղորդագրություններում: Իրականությունը սա է: Ամեն ինչի սղություն կա՝ ընդհուպ մինչեւ բացակայություն: Արթուր Թովմասյանի հրաժարականի վերաբերյալ խորհուրդ կտայի իրենց խմբակցությունից տեղեկանալ: Ես մանրամասներին չեմ տիրապետում:

-Իսկ իրեն փոխարինող Դուք ո՞մ եք տեսնում:

-Փոխարինողը ընդհանրապես, համաձայն կարգի, իրենց խմբակցությունը՝ մեծամասնությունը պետք է առաջարկի, իրենց հրաժարվելու դեպքում արդեն ես չեմ կարող ասել, իրենց փոխարեն որոշել չեմ կարող: Չեմ կարող պատասխանել իրենց խմբակցության անունից: Դա արդեն այս երկու օրը հստակ պարզ կլինի: Այս պահին, կարծում եմ, էական խնդիրներից չէ սա, Արթուր Թովմասյանը կլինի, թե մեկ այլ մարդ, կարծում եմ՝ վճռորոշ չէ: Այս պահին կարեւորը արցախահայության հարցը լուծելու խնդիրն է: Ով էլ լինի, ես կցանկանամ՝ լինի բեղմնավոր աշխատանք, կարեւորը թող իմանա՝ ինչ է անելու ու ինչպես է աշխատելու:

-Պարոն Հայրապետյան, իսկ հումանիտար օգնության վերաբերյալ, ի՞նչ եք կարծում, ի՞նչ շարժ կա: Ադրբեջանական կողմը թույլ չի տալիս՝ մուտք գործեն:

-Այս պահի դրությամբ ադրբեջանցիները կոշտ պատասխան են տվել բոլոր կողմերին, եւ փաստն այն է, որ կամրջով չեն անցել, թույլտվություն չեն ստացել: Ռուս խաղաղապահների միջնորդությամբ որոշվել էր, որ հումանիտար բեռը պետք է մտնի Արցախ, որը մինչ այժմ չի մտել: Այս առնչությամբ եւս մանրամասների չեմ տիրապետում:

-Այնուամենայնիվ, ի՞նչ եք կարծում, ընդհանուր հայտարարի կգա՞ն կողմերը, եւ բեռը մուտք կգործի՞ Արցախ:

- Ես, որպես հույս, կարող եմ հայտնել, որ, այո, բայց ճանաչելով ադրբեջանցուն՝ կարող եմ ասել, որ նա անելու է ամեն հնարավորը, որ այդ բեռը Արցախ չմտնի: Չնայած այդ բեռը, Արցախ մտնելով, այնպես չէ, որ մեկ ամսվա կամ երկու ամսվա հարց է լուծում, լավագույն դեպքում մի քանի օր պարզապես թեթեւացնելու է ճգնաժամը, ստեղծված ծանր վիճակը: Սակայն լավ իմանալով ադրբեջանցուն, նրա հետ տարիներ շարունակ հարեւանություն անելով, նրա հետ հակամարտության մեջ լինելով՝ կարող եմ ասել, որ նույնիսկ այդ մի քանի օրվա բեռի մուտքը դեպի Արցախ նրանք կխոչընդոտեն: Նրանք տարիներ շարունակ այդպես են եղել. եթե նրանց հետ որեւէ մեկը ուժի լեզվով չի խոսում, նրանք դառնում են անկառավարելի եւ ոչ մի բանի առջեւ կանգ չեն առնում: Այժմ եւս նույնն է կատարվում. եթե որեւէ մեկը նրան չսանձի, նա կշարունակի այսկերպ գործել:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԹԵԺ Է

Արցախի ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանն արդեն պաշտոնապես հայտարարել է, որ այսօր հրաժարական է ներկայացնելու:

Այսպիսով, ԱԺ նախագահի հրաժարականով պայմանավորված՝ Արցախում արտառոց իրավիճակ է ստեղծվել:

Ինչպես արդեն հայտնել ենք, Արցախի ԱԺ նախագահի հավանական թեկնածուն Արցախի ընդդիմադիր պատգամավոր, դաշնակցական Դավիթ Իշխանյանն է, ավելին՝նա համարվում է Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի «սրտի թեկնածուն»:

Ստացվում է՝ եթե պաշտոնապես առաջադրվի Դավիթ Իշխանյանի թեկնածությունը, ապա նրան ԱԺ-ում պետք է ընտրի նախագահ Հարությունյանի գլխավորած քաղաքական ուժի խորհրդարանական խմբակցությունը՝ «Ազատ հայրենիք - ՔՄԴ» կուսակցությունների դաշինքը՝ որպես խորհրդարանական մեծամասնություն:

Այսպիսով, կստացվի, որ Արցախում իշխող քաղաքական ուժի եւ «Դաշնակցության» համագործակցությունն այլեւս անխուսափելի է դառնում, կարելի է ասել՝ դառնում են կոալիցիոն ուժեր:

Անկախ իր կամքից՝ ՀՅԴ-ն պաշտոն ստանալուց հետո պարտավորվում է հավասարապես պատասխանատվություն կիսել Նիկոլ Փաշինյանի եւ Արայիկ Հարությունյանի վարած քաղաքականության համար:

Թերեւս հարց է առաջանում՝ եթե Հայաստանում էլ նման իրավիճակ ստեղծվի, եւ ՀՅԴ-ն պաշտոն ստանա նաեւ Հայաստանում, արդյոք պատասխանատվություն իր վրա կվերցնի իշխանությունը կիսելու, թե միայն պաշտոն կստանա եւ վերջ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

«ԼՈՒԾՈՒՄԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄՆ Է»

«Ապրելու երկիր» կուսակցությունը՝նախագահ Մանե Թանդիլյանի գլխավորությամբ, հուլիսի 28-ին այցելել է Կենտրոնի թաղապետարան՝ «ՀայաՔվե» նախաձեռնությանը միանալու:

Թանդիլյանը հետ միասին եկել էր նաեւ «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը:

«ՀայաՔվեի» ստորագրահավաքին միանալուց հետո Մանե Թանդրլյանը լրագրողների հետ զրույցում նշեց. «Մենք տասնյակ հազարավոր մեր հայրենակիցների յուրաքանչյուր քաղաքացիական նախաձեռնությանը, որը միտված է Արցախի համար իրենց անհամաձայնությունը ցույց տալուն, մենք այնտեղ ենք: Արցախը մեզ համար կարմիր գիծ է եղել, մենք դրա մասին հայտարարել ենք եւ պատրաստ ենք յուրաքանչյուր նախաձեռնությանը միանալու, որը պետք է արտահայտի մարդկանց անհամաձայնությունը:

Մենք համոզված ենք, որ Արցախի հարցի լուծման գլխավոր գործոնը այսօրվա իշխանությունների դադարեցումն է որպես իշխանություն: Դրա ուղղությամբ տեղի են ունենում ընտրություններ, որին մենք մասնակցում ենք եւ այդ միջոցով իշխանափոխություն ենք իրականացնելու: Մենք վստահ ենք, որ ժողովուրդը կարող է ընտրությունների միջոցով կատարել իշխանափոխություն»:

ԱՆԱՐԴՅՈՒՆՔ ԾԱԽՄԵՐ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը 2023 թվականի հունվարից հունիս ամիսներին, որպես դրամաշնորհային ծրագիր, «Գյուղատնտեսական հետազոտությունների եւ հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ին փոխանցել է 3 մլդ 281 մլն 370 հազար դրամ գումար: Նկատենք, որ, չնայած ամեն տարի գյուղատնտեսության համար ծախսվող գումարներին, այդ ոլորտը մեր երկրում չի զարգանում, կարճ ասած՝պետության ներդրումների արդյունքը չի երեւում: Նախ՝ բույսերի համար եղանակային անբարենպաստ պայմաններից ամեն տարի տուժում են հեկտարներով ցանքատարածություններ, իսկ նախարարությունն ամեն անգամ նոր պատճառաբանություններ եւ օրենքներ է առաջ բերում, որպեսզի այդ վնասները չփոխհատուցի: Գյուղատնտեսական ապահովագրության համակարգը չի ներդրվում, այնինչ բանջարեղեն եւ մրգեր իրացնելը գյուղատնտեսների համար լուրջ պրոբլեմ է. բերքը անասելի էժան է վաճառվում սեզոնին: Մարդիկ ստիպված են լինում փողոցներ փակել, որ աճեցրածն իրացնեն: Կարճ ասած, շուկայում գործող մոնոպոլիաների պատճառով բերքը հաճախ կամ վաճառվում է էժան գնով, կամ փչանում է պահեստներում: Գյուղացիների ներդրած գումարները, որպես եկամուտ, այդպես էլ չեն արդարացվում, իսկ պետությունը ոլորտի զարգացման համար միլիոնավոր գումարներ պարզապես դեն է նետում: 3 մլդ դրամով, օրինակ, կարող էինք կառուցել Սեւանի ջրառի ջրատարը, որպեսզի ջրի ավելորդ կորուստներից խուսափենք եւ Արարատյան դաշտավայրի բոլոր ցանքատարածություններ ջուր հասցնենք: Նկատենք, որ դրամաշնորհների մեծ մասը տրամադրվել է սույն թվականի հունվարի 17-ին՝այն ժամանակահատվածում, երբ գյուղատնտեսությունը գտնվում էր պասիվ վիճակում:

ԽՈՇՈՐ ԳՆՈՒՄ

Ռուստամ Բադասյանի ղեկավարած կառույցը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այս տարի հերթական խոշոր գնումն է կատարել: Ինչպես կառույցի պաշտոնական կայքից ենք տեղեկանում, ՊԵԿ-ն այս տարի շուրջ 234,8 միլիոն դրամի պայմանագիր է կնքել «Քինգ Մարշալ» անվտանգության կազմակերպության հետ, որը պահնորդական եւ թիկնապահական ծառայություններ է իրականացնում: «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ՊԵԿ-ից հայտնեցին, որ «Քինգ Մարշալ» ընկերության հետ պայմանագիրը կնքվել է 2023թ.-ի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռք բերման նպատակով: «Քինգ Մարշալ»-ն իրականացնելու է ՊԵԿ-ի կողմից շահագործվող թվով 35 պահպանվող օբյեկտների, շենքերի եւ շինությունների, կառույցների, ինչպես նաեւ դրանց հարող տարածքների պահպանության եւ անվտանգության ապահովումը: Մեր գրավոր հարցման մեջ ՊԵԿ-ից հետաքրքրվել էինք՝ քանի որ այն կառավարությանն առընթեր կառույց է, ինչու չի դիմել ՊՊԳՎ-ին կամ ՀՀ ոստիկանությանը՝ համապատասխան օբյեկտների պահպանության համար: Պարզվում է՝ոչ Ոստիկանությունը, ոչ էլ ՊՊԳՎ-ն չունեն բավարար ռեսուրս՝պետական կառույցի օբյեկտների պահպանության համար: «2023 թ.-ին Կոմիտեի եւ ՀՀ ոստիկանության համապատասխան աշխատակիցների միջեւ տեղի են ունեցել անհրաժեշտ քննարկումներ, եւ իրականացվել են Կոմիտեի տարածքների եւ շենք շինությունների նախնական հետազոտություններ, ինչից հետո ՀՀ ոստիկանության կողմից ստացվել է պատասխան, որ ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության ենթակա ստորաբաժանումների թափուր հաստիքով պայմանավորված՝ներկայումս հնարավոր չէ պահպանության ծառայության ստանձնումը»,- ասվում է ՊԵԿ-ից ստացված պատասխանում:

ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ՝ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ

Բարձրագույն դատական խորհրդում նոր բախումներ են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը ԲԴԽ անդամ Նաիրա Հովսեփյանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցել: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ նախարարի հարուցման հիմքը եղել են դատավորի դեմ ուղղված բողոքները, սակայն մեր աղբյուրները նշում են, որ իրականում շան գլուխը այլ տեղ է թաղված: Բանն այն է, որ մամուլը գրեց՝ ԲԴԽ անդամներ Վիգեն Քոչարյանը, Նաիրա Հովսեփյանը եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝Դավիթ Խաչատրյանը, հավակնում են Վճռաբեկ դատարանի դատավորի թափուր հաստիքներին: Եվ, ահա, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը չի ցանկանում, որ Նաիրա Հովսեփյանը գնա Վճռաբեկ դատարան, ուստի որոշել են նրա գնալու գործընթացը կասեցնել՝ կարգապահական վարույթ հարուցելով: Ասել է թե՝ԲԴԽ-ն կռիվ է սկսել բոլոր այն անձանց դեմ, որոնք հաշվի չեն նստում իրենց հետ, եւ թիրախում անգամ հայտնվում են իրենց ցանկալի դատավորները՝ի դեմս պատերազմի հերոս Գեւորգ Արշակյանի մոր՝դատավոր Նաիրա Հովսեփյանի, որը Աննա Հակոբյանի հետ ժպիտով նկարները հրապարակեց ու թիրախավորվեց դրա համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՅՍԵՐԸ

Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանը նշում է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքն ամբողջապես արգելափակելու հետեւանքով Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամը շարունակում է ահագնանալ: Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակիչները, դեկտեմբերի 12-ից սկսած, արդեն ավելի քան 220 օր գտնվում են փաստացի շրջափակման մեջ: Լեռնային Ղարաբաղում շարունակում են ոտնահարվել մարդկանց իրավունքները՝ կյանքի իրավունքը, կրթության իրավունքը, որակյալ առողջապահություն ստանալու իրավունքը:

«Դժվար է պատկերացնել, որ 21-րդ դարում նման իրավիճակ կարող է լինել: Եվ դժվար է պատկերացնել, որ նման պարագայում միջազգային հանրությունը չի մեկտեղելու իր ջանքերը՝ մեկ ճակատով փորձելու լուծել հումանիտար ճգնաժամը, որը ժամ առ ժամ ահագնանում է Լեռնային Ղարաբաղում: Այս 7 ամիսները ցույց տվեցին, որ Ադրբեջանը ոչ միայն ականջալուր չէ միջազգային հանրության կոչերին՝ բացելու Լաչինի միջանցքը, այլ նաեւ բացառիկ արհամարհանք է դրսեւորում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի կողմից փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի վճիռների նկատմամբ, համաձայն որի՝Ադրբեջանը պետք է ապահովի Լաչինի միջանցքով մարդկանց, մեքենաների եւ բեռների երկկողմանի անարգել երթեւեկությունը ճիշտ այնպես, ինչպես նախատեսված է 2020-ի նոյեմբերի 9-ի հայտարարությամբ, որի տակ դրված է նաեւ Ադրբեջանի նախագահի ստորագրությունը»,- ասաց փոխնախարարը:

Փոխնախարարը շեշտեց՝ Ադրբեջանի ղեկավարության վերջին հայտարարությունները շատ դժվար կլինի կառուցողական համարել:

ԱՐՑԱԽ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ՝ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներին, որոնք այցելել էին Կոռնիձոր, ուր կանգնած են Հայաստանից Լեռնային Ղարաբաղ ուղարկված հումանիտար օգնությամբ բեռնատարները, ներկայացրեց իրավիճակը, Լեռնային Ղարաբաղում օր օրի սրվող հումանիտար ճգնաժամն ու այդ ամենին Ադրբեջանի ոչ ադեկվատ արձագանքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մարզպետը նախ շնորհակալություն հայտնեց դիվանագետներին, որ եկել են տեղում ծանոթանալու իրավիճակին, ապա անձամբ ցույց տվեց, թե որ հատվածում է գտնվում Հակարիի կամուրջը, որտեղ Ադրբեջանն ապօրինի անցակետ է տեղադրել ու արգելափակել է Լաչինի միջանցքը՝ թույլ չտալով, որ նույնիսկ հումանիտար մատակարարումները հասնեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդին:

«Դուք կարող եք տեսնել՝ հումանիտար բեռներով մեքենաները տեւական ժամանակ է, ինչ գտնվում են այստեղ: Մինչեւ այս պահը մենք շատ փոքր ծավալով դեղորայք ու սննդամթերք ուղարկել ենք Արցախ, բայց վերջին ժամանակներում ընդհանրապես անհնար է որեւէ բան ուղարկել: Մեքենաներն այստեղ կանգնած են, եւ անհնար է դառնում այս հումանիտար բեռների տեղափոխումը սահմանից այն կողմ»,-ներկայացրեց Ղուկասյանը:

Մարզպետն ընդգծեց՝ Արցախում քաղցած են մարդիկ, քաղցած են երեխաները, իսկ Ադրբեջանն այդ ամենին արձագանքում է՝ինտեգրացիայի մասին խոսելով:

«Սակայն այդ ինտեգրացիային արդյոք սովամահության հասցնելու ճանապարհո՞վ են ուզում հասնել: Դա անընդունելի է բոլորիս համար: Այս հումանիտար բեռը պետք է հասնի այն մարդկանց, որոնք անհամբեր սպասում են, որոնք սոված են: Այլապես մենք բոլորս լուռ ականատես ենք լինելու, թե ինչպես է իրավիճակն ամեն վայրկյան վատթարանում»,- ասաց մարզպետը՝դիմելով դիվանագետներին:

Հայաստանից հուլիսի 26-ին 361 տոննա հումանիտար օգնություն է ուղարկվել Լեռնային Ղարաբաղ 19 բեռնատար ավտոմեքենաներով: Հումանիտար օգնությունը հուլիսի 26-ին հասել է Լաչինի միջանցքի մուտքի հատված: Հայաստանը խնդրել է, որ ԼՂ-ում տեղակայված ՌԴ խաղաղապահ զորախմբի ներկայացուցիչներն ընդունեն բեռն ու տեղափոխեն ԼՂ, որտեղ Լաչինի միջանցքի՝ շուրջ 8 ամիս ապօրինի արգելափակված լինելու հետեւանքով հումանիտար ճգնաժամ է հաստատված: Բեռնատարներով Հայաստանից Լեռնային Ղարաբաղ է ուղարկվում մակարոնեղեն, շաքարավազ, բուսական յուղ, կաթի փոշի, աղ, մանկական կեր, դեղորայք:

Ադրբեջանն անցած տարվա դեկտեմբերից արգելափակել է Արցախը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Սկզբնական շրջանում միջանցքն արգելափակել էին այսպես կոչված բնապահպաններ՝ բնապահպանական կեղծ հիմնավորումներով եւ պահանջներով, իսկ միջանցքի երթուղին փոխելուց հետո Ադրբեջանն ապօրինի անցակետ տեղադրեց միջանցքում՝ խոչընդոտներ հարուցելով ազատ տեղաշարժի համար: Սկզբնական շրջանում միջանցքով որոշակի տեղաշարժ, այնուամենայնիվ, կար, ՌԴ խաղաղապահ զորակազմի միջնորդությամբ սահմանափակ քանակով մարդասիրական բեռ մտնում էր Լեռնային Ղարաբաղ, նաեւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջոցով բուժման կարիք ունեցող անձինք տեղափոխվում էին Հայաստան եւ հակառակ ուղղությամբ: Հունիսի 15-ից Ադրբեջանն ամբողջությամբ արգելափակել է Լաչինի միջանցքը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՇԱՆԱԳՈՒՄ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀՐԱՄԱՆՈՎ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել պաշտոնի նշանակման մասին: Որոշման մեջ ասվում է. «Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով եւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ ու 151-րդ կետերը եւ Քրիստինե Ալեքսանյանի դիմումը՝ վերջինիս նշանակել վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի օրենսդրության կատարելագործման եւ վերլուծությունների վարչության պետ՝ (պաշտոնի ծածկագիր՝ 06-Գ27-17.1-Ղ2-1) պաշտոնային դրույքաչափը սահմանելով «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին համապատասխան»:

ՆՈՐ ՏՆՕՐԵՆ ՈՒՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Հարությունյանը ազատվել է պաշտոնից:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ճշտել տեղեկատվությունը, ինստիտուտի ընդունարանից մեզ պատասխանեցին, որ արդեն նախկին տնօրեն Դավիթ Հարությունյանն աշխատանքից ազատվել է նոր աշխատանքի անցնելու պատճառով: Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մերի Մանուչարյանը հրաժարվեց մեզ հետ խոսել:

Հավելենք, որ Մանուչարյանը 2015թ. նոյեմբերից մինչեւ օրս «ՀՀ ԳԱԱ, Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում» աշխատում է որպես գիտաշխատող, ավագ գիտաշխատող, թեմայի ղեկավար, Տնտեսության իրական հատվածի բարեփոխումների բաժնի վարիչ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՐԱԺԱՐՎԵՑ ՊԱՇՏՈՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի գրառումից տեղեկանում է, որ վերջինս իր անձնական որոշմամբ քաղաքական պատասխանատվություն է վերցնում՝ հեռանալու Ազգային ժողովի նախագահի պաշտոնից՝ հավատարիմ մնալով 1991 թվականին հայ ժողովրդի կողմից հանրաքվեով ընդունված գաղափարին: Թովմասյանի՝ իր էջում կատարված գրառման մեջ մասնավորապես ասվում է. «Մինչեւ վերջին շունչս ծառայելու եմ Հայաստանի Հանրապետությանը եւ նրա ժողովրդին, Արցախի Հանրապետությանը եւ նրա ժողովրդին:

Աստված պահապան Հայաստան աշխարհին:

Վաղը կներկայացնեմ հրաժարականի դիմում»:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էդգար Յագուտյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, վրդովված լինելով այն հանգամանքից, որ «Կաբարկո» ՍՊԸ-ին պատկանող «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերության կայքէջում իր անվամբ բացված օգտահաշվով խաղարկությանը մասնակցելու արդյունքում 2022թ. ապրիլի 14-ին շահած «Այֆոն 13» մոդելի բջջային հեռախոսը տեւական ժամանակ իրեն չեն տրամադրել՝ պատճառաբանելով, որ սպասարկման կենտրոններում համատասխան մոդելի բջջային հեռախոս չկա, իսկ շահումները տրվում են եռամսյա ժամկետում, 2022 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում,

որպես հաճախորդ մտել է Երեւան քաղաքի Սեբաստիա 125/4 հասցեում գործող «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերության սպասարկման կենտրոն, դիտավորյալ կերպով անտեսելով հասարակական վայրերում վարքագծի ընդունված նորմերը, սեփական անձի առավելությունն ընդգծելու մոլուցքով տարված՝ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը. նախ նստել է սպասարկման կենտրոնի աշխատակցի՝ այդ պահին ազատ աթոռին, պահանջել է շրջանցել շահումները եռամսյա ժամկետում տրամադրելու սահմանված կարգն ու իրեն տրամադրել իր շահած «Այֆոն 13» մոդելի բջջային հեռախոսը, անտեսել է անվտանգության աշխատակից Սասուն Տիգրանյանի հորդորը՝ սպասարկման կենտրոնի աշխատանքներին չխոչընդոտելու համար ազատել սպասարկման կենտրոնի աշխատակցի աթոռը եւ նստել սրահում գտնվող այլ աթոռի, հայտարարել է, որ չի հեռանա, մինչեւ չստանա իր շահումը, ասել է, որ եթե իր շահումը չեն տալիս, ուրեմն ինքը կարող է ջարդել սպասարկման կենտրոնի համակարգչի մոնիտորը, այնուհետեւ տեղից կանգնելով՝ ձեռքով հարվածել է սեղանին դրված «LG 22շp38 LED» մոդելի համակարգչային մոնիտորին, ցած գցել այն, ապա կողաշրջել է իր դիմաց գտնվող սեղանը, ինչի արդյունքում սեղանին դրված «Canon MF 232» մոդելի պատճենահանման սարքը, GXP2130 մոդելի ցանցային հեռախոսը եւ ստեղնաշարն ընկել են գետնին եւ վնասվել, այնուհետեւ էդգար Յագուտյանը ձեռքով հարվածել եւ գետնին է գցել կողքի սեղանին դրված «LG 22շp38 LED» մոդելի համակարգչային մոնիտորը, կողաշրջել է այդ սեղանը՝ այդ ընթացքում տալով անհասցե սեռական բնույթի հայհոյանքներ, որից հետո, շարունակելով խուլիգանական գործողությունները, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով սպասարկման կենտրոնում ներկա գտնվող աշխատակիցների եւ հաճախորդների նկատմամբ, անտեսելով անվտանգության աշխատակցի դիտողությունները, մոտեցել է սպասարկման կենտրոնում գտնվող «Իզի Փեյ» ՍՊԸ-ին պատկանող վճարային տերմինալին, ձեռքով հարվածել եւ ջարդել է տերմինալի էկրանը, այնուհետեւ մոտեցել է սպասարկման կենտրոնի սենյակներից մեկին, տեսնելով, որ աշխատակցուհին վախեցած փակում է սենյակի դուռը՝ ոտքով հարվածել է աշխատասենյակի փակ դռանը, արդյունքում շուրջ 30 րոպե կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, խաթարել «Կաբարկո» ՍՊԸ-ին պատկանող «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերության Երեւան քաղաքի Սեբաստիա 125/4 հասցեում գործող սպասարկման կենտրոնի աշխատանքը՝ աշխատակիցների եւ հաճախորդների մոտ ստեղծելով տագնապի եւ վախի մթնոլորտ: Բացի այդ, էդգար Սաշիկի Յագուտյանը, վրդովված լինելով այն հանգամանքից, որ «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերության կայքէջում իր անվամբ բացված օգտահաշվով խաղարկությանը մասնակցելու արդյունքում 2022թ. ապրիլի 14-ին շահած «Այֆոն 13» մոդելի բջջային հեռախոսը տեւական ժամանակ իրեն չեն տրամադրել՝ պատճառաբանելով, որ սպասարկման կենտրոններում համատասխան մոդելի բջջային հեռախոս չկա, իսկ շահումները տրվում են եռամսյա ժամկետում, եւ որ 2022թ. մայիսի 27-ին վերոհիշյալ ընկերության Երեւան քաղաքի Սեբաստիա 125/4 հասցեում գործող սպասարկման կենտրոնում կրկին մերժել են իրեն, իսկ տեղի ունեցած միջադեպի արդյունքում իրեն բերման են ենթարկել ոստիկանության Մալաթիայի բաժին, 2022թ. մայիսի 28-ին գիշերային ժամերին 3 անգամ զանգահարել է «Կաբարկո» ՍՊԸ-ին պատկանող «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերության զանգերի սպասարկման կենտրոն, աշխատակցուհուն պատմել է, որ դեռեւս 2022թ. ապրիլին շահել է «Այֆոն 13» մոդելի բջջային հեռախոս, սակայն իր շահումն իրեն չեն տալիս, անտեսելով աշխատակցի պարզաբանումները՝ շահումները եռամսյա ժամկետում հանձնելու կարգի մասին, եւ որ այդ ժամկետում իր շահումը կտրամադրվի իրեն՝ հայտնել է, որ նախորդ օրը ջարդել եւ վնասել է Երեւան քաղաքի Սեբաստիա 125/4 հասցեում գործող «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերության սպասարկման կենտրոնի գույքը, եւ եթե իր շահումն իրեն անհապաղ չտրամադրեն, պատրաստվում է շարունակել իր գործունեությունը, ջարդել ու վնասել ընկերության մյուս մասնաճյուղերի սպասարկման կենտրոնների գույքը եւ պատճառել խոշոր չափի՝ մինչեւ երեք միլիոն ՀՀ դրամի վնաս:

ՎԱՐՈՒՅԹ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ ՓՈԽՎԵՑ

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Միեր Սահակյանի եւ ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի միջադեպի գործով դատական նիստում դատարանը փոխել է Միեր Սահակյանի խափանման միջոցը: Մասնավորապես, Հայաստանից բացակայելու արգելքը փոխարինվել է «գրավ» խափանման միջոցով:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ այս տարվա մարտի 31-ին ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ Միեր Սահակյանի միջեւ միջադեպ էր տեղի ունեցել Ազգային ժողովի պետահիրավական մշտական հանձնաժողովի փակ նիստում:

Ըստ նախաքննական մարմնի՝ Միեր Սահակյանը մոտեցել է Պետահիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանին եւ աջ ձեռքով դիտավորությամբ հարվածել նրա դեմքի ձախ քունքային շրջանին: Հարվածի հետեւանքով Վարդանյանի առողջությանը պատճառվել է թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Աննա Վարդապետյանն ապրիլի 11-ին խորհրդարանում ներկայացրեց Միեր Սահակյանի նկատմամբ քրեական վարույթ հարուցելու միջնորդությունը: Փակ գաղտնի քվեարկությամբ Միեր Սահակյանը զրկվեց անձեռնմխելիությունից:

Միեր Սահակյանն ասել էր, որ կողմ է քվեարկելու իր նկատմամբ քրեական վարույթ հարուցելուն:

Միեր Սահակյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 297-րդ հոդվածի (խուլիգանություն) առաջին մասով եւ 171-րդ հոդվածի (առողջությանը թեթեւ վնաս պատճառելը) 2-րդ մասի 7-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրվել երկրից չբացակայելու մասին արգելքը:

ՄԱՀԱՑԵԼ Է ԵՎՍ ՄԵԿԸ

Երեւան-Երասխ ճանապարհին հուլիսի 18-ի կեսգիշերին ողբերգական վթարից հետո մահացել է նաեւ հիվանդանոց տեղափոխված եւս մեկ երիտասարդ:

Հիշեցնենք, որ հուլիսի 18-ին՝ ժամը 00.30-ի սահմաններում, Երեւան-Երասխ ճանապարհի 32-րդ կմ-ին իրար էին բախվել «Ֆորդ Տրանզիտ», «ԳԱԶԵԼ», «Մերսեդես», «Ինֆինիտի» եւ «ԲՄՎ» մակնիշի մեքենաներ: «ԲՄՎ»-ի ուղեւոր 21-ամյա Մասիս Ժուռոյանը մահացել էր տեղում, իսկ 17 անձ տեղափոխվել էին հիվանդանոց, որտեղ մահացել էին նաեւ 43-ամյա Սարգիս Լեւոնյանը եւ 25-ամյա Շանթ Ժուռոյանը:

Հուլիսի 27-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ մահացել է նաեւ 30-ամյա Աշոտ Կոստանյանը:

Քրեական վարույթը շարունակվում է:

ՈՎ Է ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

ԱՄԻՐՅԱՆԻ ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Սահակ Սահակյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 14:20-ի սահմաններում, Երեւան քաղաքի Ամիրյան 5-րդ շենքի բակում գտնվող, իրեն պատկանող մեսաղական ավտոտնակի դիմաց Վահե Ղեւոնդի Կիրակոսյանի կնոջը պատկանող «Ինֆինիտի FX35» մակնիշի 01 MG 070 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը կայանելու շուրջ ծագած խոսակցության ժամանակ վիճաբանել է Վահե Կիրակոսյանի հետ, ինչի ընթացքում ավտոտնակից վերցնելով փայտե մահակը՝ բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս՝ դիտավորությամբ Վահե Կիրակոսյանին պատճառելով ձախ նախաբազկի զույգ ոսկրերի փակ կոտրվածք, տեղաշարժով մարմնական վնասվածք, ապա միեւնույն փայտե մահակով հարվածներ է հասցրել «Ինֆինիտի FX35» մակնիշի 01 MG 070 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի տարբեր հատվածներին՝ դիտավորությամբ վնասելով այն, որից հետո պարզաբանման համար շենքի բակ եկած Վահե Կիրակոսյանի եղբոր՝ Արամ Ղեւոնդի Կիրակոսյանի եւ վերջինիս բարեկամ Ռոմեո Ժորայի Հայրապետյանի միջեւ առաջացած վիճաբանության ժամանակ, նախազգուշացնելով իրեն սպասելու հանգամանքի մասին, գնացել է Ամիրյան 3-րդ շենքի իր բնակարան եւ ապօրինաբար Վահե ու Արամ Կիրակոսյաններին եւ Ռոմեո Հայրապետյանին կյանքից զրկելու ուղղակի դիտավորությամբ վերցրել է իր կողմից ապօրինի ձեռք բերված զործարանային արտադրության «ՊՄ Մակարով» տեսակի 9մ18 տրամաչափի ակոսափող ատրճանակը՝ լիցքավորված առնվազն յոթ փամփուշտներով:

Այս ամենից հետո իջել է Երեւան քաղաքի Ամիրյան փողոցի 5-րդ շենքի բակ, որտեղ ատրճանակը պահելով հավաքված Արամ եւ Վահե Կիրակոսյանների, Ռոմեո Հայրապետյանի, նույն շենքում տեղակայված «Երեւան Պանդոկ» ռեստորանի աշխատակիցներ Արտակ Վարդգեսի Առաքելյանի, Հայկ Արտյուշայի Հովհաննիսյանի, ռեստորանում պահնորդական ծառայություն իրականացնող Կարեն Թադեւոսի Ղարիբյանի ուղղությամբ՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, իրական վտանգ ստեղծելով Արտակ Առաքելյանի, Հայկ Հովհաննիսյանի եւ Կարեն Ղարիբյանի կյանքի համար՝ արձակել է երեք կրակոցներ, որից հետո վերջիններս դիմել են փախուստի տարբեր ուղղություններով, իսկ Սահակ Սահակյանը, շարունակելով հանցավոր մտադրության իրականացումը, հետապնդել է փախուստի դիմող Արամ Կիրակոսյանին եւ նրա հետեւից կատարել է եւս մեկ նշանառու կրակոց, ինչի հետեւանքով Արամ Կիրակոսյանին պատճառել է աջ սրունքի միջին երրորդ գծային մակերեսի պատռած վերք՝ հրազենային վիրավորման ձեւով մարմնական վնասվածք, իսկ Ռոմեո Հայրապետյանին ձախ զսպատեղի հրազենային վիրավորման ձեւով մարմնական վնասվածք՝ Արամ Կիրակոսյանի, Վահե Կիրակոսյանի եւ Ռոմեո Հայրապետյանի սպանությունն ավարտին չհացնելով՝ իր կամքից անկախ հանգամանքներում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել են 1 անհետ կորած եւ 2 հետախուզվող: Կամավոր ներկայացել է 1 հետախուզվող:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՄՈՒՐՋ Է ՓԼՎԵԼ

Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում՝ գյուղի փոստային բաժանմունքի շենքի մոտ փլվել է Աղստեւ գետի վրա ձգվող հետիոտնի կամուրջը: Այժմ գետի աջ ափին գտվող թաղամաս այցելելու համար հաղարծնեցիները ստիպված են երկար ճանապարհ անցնել: Հայտնի չէ, թե այդ հետիոտնի կամուրջը վերականգնվելու է արդյոք, երբ եւ ում ֆինանսական միջոցներով:

ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ ԽՆԴԻՐ

Ներկայումս Դիլիջան քաղաքում պետական սուբվեցիոն ծրագրերով բազմաթիվ ծրագրեր են իրականացվում: Այդ ծրագրերի մի զգալի մասը փողոցների կապիտալ շինարարություն, հիմնանորոգում է: Սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ փողոցների հիմնանորոգումը կատարվում է շինարարական պատշաճ որակով: Դիլիջան քաղաքի բնակիչները հայտնում են, որ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը հիմնանորոգվել է, սակայն փողոցի միայն մեկ կողմում է կառուցվել անձրեւաջրերի հեռացման համար նախատեսված սելավատար, հիմնանորոգված այդ ճանապարհի թեքությունը շինարարները սխալ են տվել, հորդ անձրեւներից հետո սելավատարի դիմացի կողմում գետի նման մեծ քանակով անձրեւաջրեր են հոսում: Դիլիջան քաղաքի բնակիչներին միավորող՝ Ֆեյսբուքի «Դիլիջանցիք» խմբում քաղաքի բնակիչներից մեկը տեսանյութ է տեղադրել՝ հորդ անձրեւից հետո կոյուղատարից մեծ շիթով կեղտաջուր է թափվում քաղաքի փողոցներից մեկի ասֆալտի ծածկին:

ԴԱՏ՝ ՎԱՐԿԻ ԳՈՐԾՈՎ

«Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ն Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ Ավետիք Խորենի Ադամյանի եւ «Չինչինի ճագարաբուծական տնտեսություն» ԲԲԸ-ի՝ 9 միլիարդ 192 միլիոն 181 հազար 30 դրամ բռնագանձման եւ բռնագանձումը գրավի առարկայի վրա տարածելու պահանջներով: Գրավը նշված ճագարաբուծական տնտեսությունն է, որը վաղուց չի գործում: Ավետիք Ադամյանը Բերդի տարածաշրջանի համայնքները տնօրինող «Հայանտառ» ՊՈԱԿ «Արծվաբերդի անտառտնտեսություն մասնաճյուղի» երկարամյա տնօրենն է: 2018 թվականի իշխանափոխությունից հետո Ավետիք Ադամյանն ազատվել է Արծվաբերդի անտառտնտեսության տնօրենի պաշտոնից, հետո նրան նորից են նշանակել այդ պաշտոնում: Ավետիք Ադամյանի եւ Արծվաբերդի անտառտնտեսության այլ պաշտոնյաների վերաբերյալ, ապօրինի անտառհատումների հետ կապված, քրեական գործ է քննվում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում: 2023թ. հուլիսի 3-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում դատավոր Նարինե Անանյանը որոշել է «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի ներկայացրած քաղաքացիական գործով անցնել դատաքննության:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՍՈՒԲՎԵՆՑԻԱ

ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն երեկ աշխատանքային այցով մեկնել է Գեղարքունիքի մարզ: Գավառում կայացած խորհրդակցության ժամանակ վարչապետին ներկայացվել է Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի 2022թ. գործունեության հաշվետվությունն ու ընթացիկ տարում իրականացվող ծրագրերի ընթացքը:

Խորհրդակցությանը մասնակցել են տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, Պետական վերահսկողական ծառայության պետ Ռոմանոս Պետրոսյանը, էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ պաշտոնատար այլ անձինք:

Նախ զեկուցվել են 2018-2022թթ. իրականացված սուբվենցիոն ծրագրերի մասին, ըստ որի՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 430 հայտ, որից հաստատվել է 386-ը: Սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր գումարը կազմել է 25 մլրդ 367 մլն դրամ, որից Կառավարության համաֆինանսավորումը կազմում է 14 մլրդ 844 մլն դրամ, համայնքային համաֆինանսավորումը՝ 10 մլրդ 462 մլն դրամ, մասնավորի համաֆինանսավորումը՝ 59,7 մլն դրամ: Սուբվենցիոն ծրագրերի արժեքը 2018 թ. կազմել է 1 մլրդ դրամ, 2019թ.՝ 4,4 մլրդ դրամ, 2020թ.՝ 4,4 մլրդ դրամ, 2021թ.՝ 5,8 մլրդ դրամ, 2022թ.՝ 9,7 մլրդ դրամ: Սուբվենցիոն ծրագրերն իրականացվել են հետեւյալ ոլորտներում՝ ասֆալտապատում, լուսավորության անցկացում, ջրամատակարարման, ոռոգման համակարգերի նորոգում, փողոցների սպասարկում, գազաֆիկացում, մանկապարտեզների կառուցում/վերանորոգում, զբոսայգիների բարեկարգում եւ այլն:

2022 թ. միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատված 34 ծրագրերի ընդհանուր արժեքը 144 ենթածրագրերով կազմել է 9 մլրդ 691 մլն դրամ, որից ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորումը՝ 5 մլրդ 592 հազար դրամ, համայնքների համաֆինանսավորումը՝ 4 մլրդ 63 մլն դրամ, այլ ներդրողներինը՝ 35 մլն 413 հազար դրամ:

2022 թ. ավարտվել են 148 շինաշխատանքներ: Քաղաքաշինության ոլորտից բխող միջոցառումների արդյունքում իրականացվել է սուբվենցիոն ծրագրերի 350 մշտադիտարկում, տրվել է 486 շինթույլտվություն, եղել է 8 միկրոռեգիոնալ փաստաթուղթ, 1248 կմ եւ 185.3 կմ ճանապարհների պահպանություն:.

Տեղեկացվել է, որ 2023թ. ներկայացվել է սուբվենցիոն 45 հայտ 160 ենթածրագրով, որից հաստատվել է 23-ը՝ 144 ենթածրագրով: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 11.2 մլրդ դրամ, որից պետական բյուջեի համաֆինանսավորումը կազմում է 6,7 մլրդ դրամ, համայնքի համաֆինանսավորումը՝ 4,3 մլրդ դրամ, մասնավորի համաֆինանսավորումը՝88,9 մլն դրամ:

2018-2022թթ. Գեղարքունիքի մարզում մի շարք ծրագրեր են իրականացրել Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը, Առողջապահության նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, Քաղաքաշինության կոմիտեն: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 51 մլրդ դրամ:

2018 թվականից մինչ այժմ մարզում հիմնանորոգվել է 350 կմ ճանապարհ:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՍԴ ԴԱՏԱՎՈՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Սահմանադրական դատարանի դատավոր Արթուր Վաղարշյանը 2022 թվականի հայտարարատու տարվա տարեվերջին հայտարարագրել է 8 անշարժ գույք, որից մեկը բնակարան է, որը գնվել է 2001 թվականին Երեւանում, եւս մեկ բնակարան ստացել է ժառանգություն 1993 թվականին, իսկ գույքի մնացած մասը հողամասեր են Գեղարքունիքի մարզի Սեւան եւ Լճաշեն համայնքներում:

Տվյալ տարվա վերջում առկա որպես տրանսպորտային միջոց հայտարարագրել է երկու մեքենա՝ 2007 թվականի արտադրության LEXUS, որը ձեռք է բերվել 2013 թվականին, եւ 1993 թվականի արտադրության OPEL, որը գնվել է 2002 թվականին:

Դատավորի բանկային ավանդները կազմել են 2 մլն դրամ եւ 13 հազար դրամ: Նրա բանկային դրամական հաշիվների մնացորդները կազմել է 2 մլն դրամ եւ 700 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 5 մլն դրամ:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 25 մլն 426 հազար դրամ, որից 15 մլն 416 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Սահմանադրական դատարանից, իսկ 4 մլն 290 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Երեւանի պետական համալսարանից: Վաղարշյանի եկամտի 4 մլն 290 հազար դրամը վարկերն է:

Արթուր Վաղարշյանը հանդիսանում է ԵՊՀ դասախոս, պրոֆեսոր, իրավագիտության ֆակուլտետի խորհրդի անդամ, Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի անդամ, ՀՀ իրավաբանների միության անդամ, Երկրապահ կամավորների միության անդամ: Վաղարշյանի դուստրը եւ որդին սովորում են Երեւանի պետական համալսարանում. նրանց հոր՝ դասախոս լինելու շնորհիվ՝ նրանք ստանում են 50-70% ուսման վարձի զեղչ:

Վաղարշյանի կինը՝ Ռուզաննա Վաղարշյանը, 2016 թվականին գնել է բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանում: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 2 մլն 019 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է Երեւանի պետական համալսարանից. նա աշխատում է որպես լաբորանտ:

Հիշեցնենք, որ Արթուր Վաղարշյանի որդին ձերբակալվել էր Շիրակի մարզի նախկին ոստիկանապետ Վարդան Նադարյանի որդու դանակահարության գործով, սակայն ավելի ուշ ազատ էր արձակվել: Այս դեպքի առթիվ հարուցված քրեական գործը գտնվում է ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիրի քննչական բաժնում, որը դոփել է տեղում եւ որեւէ լուծում չի ստանում: Գուցե քրեական գործի ձգձգումը կապված է նրա հետ, որ ՍԴ անդամի որդուն էլ են փորձում «ջրից չոր դուրս հանել»: Ինչեւէ, հետեւենք զարգացումներին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 2 դեպք:*

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Կոնվերս բանկ»-ի «Զեյթուն» մասնաճյուղը կգործի նոր հասցեում:

07.08.2023 թվականից «Կոնվերս բանկ»-ի «Զեյթուն» մասնաճյուղը (հասցե՝ք. Երեւան, Ռուբինյանց 14/7) գործելու է ք. Երեւան, Պարույր Սեւակի փողոց 59/1 հասցեում, որտեղ ապահովված են լավագույն պայմանները հաճախորդների սպասարկման եւ որակյալ բանկային ծառայությունների մատուցման համար:

«Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի ծառայություններից 24/7 ռեժիմով կարող եք օգտվել Converse Mobile հավելվածով, «Առցանց բանկ» համակարգով, Վճարային տերմինալների միջոցով, ինչպես նաեւ այցելելով բանկի՝ Ձեզ հարմար մասնաճյուղ:

Մանրամասները՝ 010-511-211, conversebank.am:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՊԵՏՊԱՏՎԵՐ՝ ՀԵՊԱՏԻՏ Ց-Ի ՀԱՄԱՐ

Կառավարությունը 2020 թվականից սկսել է ծրագիր, որի շրջանակներում անվճար տրամադրում է դեղորայք Հեպատիտ Ց-ի համար:

Նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը Առողջապահության նախարարությունում հրավիրված ասուլիսի ժամանակ, «Ժողովուրդ» օրաթերթի հարցին ի պատասխան, նշեց.

«Առողջապահության նախարարությունը Կառավարության հետ համատեղ իրականացնում է պետական բյուջեի միջոցների շրջանակներում թեստավորում արագ թեստերի շնորհիվ: Միջազգային դոնորների աջակցությամբ փորձում ենք իրականացնել այս ծրագիրը՝ թեստավորում պոլիկլինիկաներում, շարժական կլինիկաների միջոցով: Ինչպես նաեւ ՊԾՌ թեստավորումն է արդեն իսկ սկսվել անվճար իրականացվել պետական բյուջեի շրջանակներում»:

Նախարարի տեղակալը հավելեց, որ այն անձինք, բուժաշխատողները, որոնք աշխատում են ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում, նույնպես պետական բյուջեի շրջանակներում են ստանում իրենց հասանելիք աշխատավարձերը, որպեսզի կարողանան հիվանդներին տրամադրել այդ բուժօգնությունը:

Հավելենք, որ քրոնիկ Հեպատիտ Բ-ի եւ Ց-ի դեպքերը, ինչպես նաեւ Հեպատիտ Բ-ի հակածնակիրները եւ Հեպատիտ Ց-ի վիրուսի նկատմամբ հակամարմիններ ունեցող անձինք 2016 թվականից ներառվել են պաշտոնական պետական վիճակագրական հաշվետվական ձեւերում: Վերը նշված ծրագրերի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքում Հայաստանում վերջին հինգ տարվա ընթացքում սուր Հեպատիտ Բ-ի հիվանդության ցուցանիշը նվազել է 12 անգամ, իսկ սուր Ց-ինը՝ 1,3 անգամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ԱՆՎՃԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐ

ՀՀ կառավարության հուլիսի 27-ի նիստում հավանության են արժանացել նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 2023/2024 ուսարվա անվճար ուսուցման (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը՝ ըստ մասնագիտությունների, ինչպես նաեւ առաջնահերթ եւ կարեւոր ոլորտների մասնագիտությունների ցանկն ու քանակը:

ՀՀ կառավարության կողմից անվճար ուսուցման (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերի հատկացումը նպատակ ունի խրախուսելու բարձր առաջադիմություն ունեցող դիմորդներին, ինչպես նաեւ պատրաստելու մասնագետներ՝ ելնելով ՀՀ աշխատաշուկայի պահանջներից եւ ապահովելու պարտադիր միջնակարգ կրթությունը: Կառավարության որոշմամբ՝ 6064 տեղ է հատկացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով պահպանվել է նախորդ տարվա թիվը՝ 3312:

Որոշմամբ նախատեսված նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով անվճար ուսուցմամբ (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը հատկացվելու են 55 ուսումնական հաստատության՝ 42 մասնագիտությամբ, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 76 ուսումնական հաստատության՝ 107 մասնագիտությամբ:

Որոշման նախագիծը մշակելիս հաշվի են առնվել հանրապետությունում գործող ուսհաստատությունների՝ աշխատաշուկայի պահանջարկից ելնելով մասնագետների պատրաստման հնարավորությունները (լիցենզիա, նյութատեխնիկական բազա, համապատասխան մասնագետներ), ինչպես նաեւ հաստատություններին հատկացվելիք, ըստ մասնագիտությունների, տեղերի նվազագույն քանակի ապահովումը: Որոշմամբ նախատեսված անվճար ուսուցման տեղերն առաջնայինը կհատկացվեն ՀՀ մարզերում գործող ՄԿՈՒ հաստատություններին:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող դիմորդները նախնական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրով քննությունները դրական հանձնելու կամ վճարովի ուսուցման առնվազն անցումային միավոր ունենալու դեպքում ընդունվում են մրցույթից դուրս՝ պահուստային տեղերի հաշվին, որի նպատակով 2023/2024 ուսումնական տարվա համար նախատեսվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով 255, իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 257 պահուստային տեղեր:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով նախատեսված պահուստային տեղերից նախատեսվում է տրամադրել նաեւ փորձարարական կարգով ներդրված մասնագիտություններին, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում եւ սպասարկում» եւ «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտություններին: Ներդրվելու են նաեւ նոր՝ «Կահույքի արտադրության տեխնոլոգիա» եւ «Վերամբարձ-տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում», իսկ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ «Ավիացիոն սարքեր եւ համալիրներ», «Բազմուղի հեռահաղորդակցման համակարգեր», «Ավտոմատիկան, հեռուստամեխանիկան եւ կապը տրանսպորտում (ըստ տրանսպորտային տեսակների)», «Գինեգործություն» եւ «Ագրոնոմիա» մասնագիտությունները: Վերոնշյալ մասնագիտությունները ներդրվելու են շուրջ 25 ուսումնական հաստատություններում:

Որոշմամբ սահմանվել է նաեւ պետության համար կարեւոր եւ առաջնահերթ մասնագիտությունների ցանկը. այդ մասնագիտություններով ընդունվածներին նախատեսվում է տրամադրել բարձր կրթաթոշակ: Մասնագիտություններն ընտրվել են՝ հետեւյալ սկզբունքներից ելնելով՝ պետության համար առաջնահերթ նշանակություն ունեցող ոլորտներ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, շինարարությունը, արդյունաբերությունը, տվյալ ոլորտների շրջանակում այն մասնագիտությունները, որոնց պարագայում չեն համալրվում ամեն տարի տրամադրվող պետության կողմից ֆինանսավորվող կամ անվճար տեղերը, ինչպես, օրինակ, անասնաբուժությունը: Ուստի, կարիք կա ներդնել խրախուսման նոր մեխանիզմներ՝ այս ուղղություններով դիմորդների հոսքը մեծացնելու եւ մասնագիտական կադրեր պատրաստելու համար:

Միաժամանակ այն մասնագիտություններով, որոնցով գրանցվում է աշխատաշուկայի մեծ պահանջարկ, ինչպես, օրինակ, կաթիլային ոռոգման համակարգի մոնտաժման մասնագետների կամ ջերմատնային տնտեսության մասնագետների պարագայում:

Մասնագիտությունների ցանկը, իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված, կարող է փոփոխություն կրել, հետեւաբար այն պարբերաբար կվերանայվի հետագա տարիներին: Կրթաթոշակի տրամադրման եւ նոր մոտեցումների հիմնավորումը ներկայացված է ներկայում շրջանառվող «ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1784-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծում:

ԿԱԴԱՍՏՐ

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՃԱՌՎԵԼ Է

Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել է Երեւան քաղաքի Կոմիտասի անվան զբոսայգու տարածքում գտնվող հողամասի կադաստրային գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երեւանի քաղաքապետի 2004 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ՝ Արշակունյաց 28/11 հասցեում գտնվող 192 քմ մակերեսով հողամասն ընդգրկված է եղել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում (օտարման ոչ ենթակա տարածքներ), սակայն հետագայում, առանց դրա նպատակային ու գործառնական նշանակության փոփոխության, Երեւանի քաղաքապետի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի որոշմամբ՝ հողամասն ուղղակի վաճառքով օտարվել է քաղաքացի Ռ.Ա.-ին:

Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ հաստատված Երեւան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ վերը նշված 192 քմ մակերեսով հողամասը գտնվում է հասարակական նշանակության կանաչ տարածքի գոտում:

Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձինք, խախտելով վերոնշյալ որոշումների, ինչպես նաեւ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջները, 2012 թվականի նոյեմբերի 23-ին մասնավորեցման ոչ ենթակա, համայնքային սեփականություն հանդիսացող՝ Կոմիտասի անվան զբոսայգում գտնվող հասարակական նշանակության 192 քմ մակերեսով հողամասը սեփականության իրավունքով փոխանցել են Ռ.Ա.-ին՝ էական վնաս պատճառելով պետության (համայնքի) օրինական շահերին:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է Երեւանի քաղաքապետարանի պաշտոնատար անձանց կողմից առերեւույթ հանցանք կատարելու դեպք՝ 2023 թվականի հուլիսի 18-ին դատախազի կողմից հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե:

2023 թվականի հուլիսի 21-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը):

Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունը 2023 թվականի հուլիսի 26-ին Երեւանի քաղաքապետի՝ 2012 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումը եւ դրա հետեւանքները վերացնելու պահանջի մասին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԲԱՑՈՒՄ

«ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԵՎՐՈՊԱ»-Ն՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն համագործակցության «Ստեղծագործ Եվրոպա 2023-2027 թթ.» համաձայնագրի շրջանակում տեղի է ունեցել «Ստեղծագործ Եվրոպա» հայաստանյան գրասենյակի պաշտոնական բացման արարողությունը:

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը եւ Ալֆրեդ Քոչարյանը, ՀՀ-ում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը, Հայաստանում հավատարմագրված ԵՄ անդամ երկրների դեսպաններ, Հայաստանի մշակութային դաշտում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, արվեստագետներ:

«Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի նպատակն է հնարավորություն ընձեռել հայաստանյան մշակութային եւ ստեղծարար ոլորտի կազմակերպություններին՝ ծավալելու միջսահմանային համագործակցություն նույն ոլորտի այլ կազմակերպությունների հետ, խթանել շփումները մշակույթի գործիչների միջեւ եւ զարգացնել մշակութային բազմազանությունը Հայաստանում: Ծրագրի շրջանակում տրամադրվում են դրամաշնորհային ծրագրեր գրականության, թատրոնի, ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտարվեստի, դիզայնի եւ մի շարք այլ ոլորտներում:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է ներկաներին գրասենյակի բացման կապակցությամբ՝ այն համարելով Հայաստանի մշակութային կյանքում կարեւոր իրադարձություն:

«Հայաստանի եւ Եվրոպական միության գործընկերային կապերը տարեցտարի էլ ավելի են զարգանում. դրա մասին է վկայում նաեւ այսօրվա ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի միջեւ «Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» ֆինան-սավորման համաձայնագիրը: Այսպիսով, մենք ոչ միայն եվրոպական արժեհամակարգի կրողն ենք, այլեւ մեզ համարում ենք եվրոպական մեծ քաղաքակրթական ընտանիքի անդամ,- ասել է նախարարը եւ հավելել:- «Ստեղծագործ Եվրոպա 2023-2027 թթ?» համաձայնագրի շրջանակում մշակութային համագործակցության հիմքում դրված նպատակներն ամբողջովին համահունչ են «Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման 2023-2027 թվականների ռազմավարությանը»»:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ թե՛ ռազմավարության, թե՛ համաձայնագրի առանցքային նպատակներն են մշակութային կյանքի հասանելիությունը եւ ներառականությունը, մշակութային եւ ստեղծարար ոլորտների արդիականացումը, դրանց զարգացման եւ ստեղծագործողների կարողությունների դրսեւորման ինստիտուցիոնալ միջավայրի ձեւավորումը, Հայաստանի դիրքավորումը՝որպես համաշխարհային քաղաքակրթական արժեքների կրող ու ստեղծող երկիր եւ այլն:

«ԿԳՄՍ նախարարությունը մեծապես կարեւորում է գրասենյակի առաքելությունը՝ ուղղված եվրոպական մեծ մշակութային տարածքում միջմշակութային կապերի զարգացմանը եւ կշարունակի շարունակական աջակցություն ցուցաբերել տեղեկատվական կենտրոնի գործունեությանը: Մաղթում եմ աշխատանքային խմբին անխափան գործունեություն, իսկ ստեղծարար ոլորտի հանրությանը՝ հաջողված նախագծերի իրականացում Եվրամիության մշակութային դաշտում»,- եզրափակել է խոսքը Ժաննա Անդրեասյանը:

Ողջույնի խոսքով հանդես է եկել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: Նա ընդգծել է «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի կարեւորությունը հստակ գործիքակազմի, աջակցող մեխանիզմների առկայության տեսանկյունից եւ նշել՝ ճիշտ համակարգման պարագայում գրասենյակի գործունեությունը կգրանցի շարունակական հաջողություններ:

ՀՀ-ում ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը եւս շնորհավորել է «Ստեղծագործ Եվրոպա» հայաստանյան գրասենյակի բացման առթիվ՝ այն համարելով կարեւոր քայլ մշակույթի ոլորտի բոլոր նախաձեռնություններում: Ըստ դեսպանի՝ ծրագրի նպատակն է թիրախավորել մշակույթի ոլորտում առկա կարիքները եւ ապահովել մշակութային բազմազանությունը Հայաստանում:

«Ստեղծագործ Եվրոպա» հայաստանյան գրասենյակի ղեկավար Սոնա Հովհաննիսյանը շնորհակալություն է հայտնել վստահության համար՝ հույս հայտնելով, որ համատեղ ջանքերը կնպաստեն գրասենյակի առաքելության իրականացմանն ու ոլորտի զարգացմանը:

Բացման արարողությունն ուղեկցվել է տաղանդավոր պատանի երաժիշտների (քանոնահարներ) համերգային կատարմամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ՓՅՈՒՆԻԿ»-Ը ՀԱՂԹԵՑ

Ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի որակավորման երկրորդ փուլի շրջանակներում «Փյունիկ»-ն արտագնա խաղում մրցեց շվեդական «Կալմար»-ի հետ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Շվեդիայում կայացած խաղի մեկնարկում, թիմերը փոխանակվում էին գրոհներով եւ հստակ գործում պաշտպանությունում: «Փյունիկ»-ն էլ, «Կալմար»-ն էլ հավասար պայքար էին ծավալել: «Կալմար»-ին, սակայն, հաջողվեց մինչ ընդմիջումն առաջ անցնել հաշվի մեջ: Գոլի հեղինակ դարձավ Տրենսկովը:

Երկրորդ կեսի մեկնարկում «Փյունիկ»-ը վերգտավ իր խաղը եւ կարողացավ իրացնել իր պահը: 55-րդ րոպեին աչքի ընկավ Յուրիչիչը: «Փյունիկ»-ն, այնուամենայնիվ, կարողացավ հաջողության հասնել եւ 81-րդ րոպեին Բրավոն արագ կողմնորոշվեց մրցակցի տուգանային հրապարակում եւ գրավեց «Կարլմար»-ի դարպասը: «Կալմար»-«Փյունիկ»՝ 1:2:

Թիմերի պատասխան հանդիպումը կկայանա մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 3-ին:

ՄԵԴԱԼ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏԻՑ

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում մեկնարկել է ծանրամարտի մինչեւ 20 եւ մինչեւ 23 տարեկանների Եվրոպայի առաջնությունը, որում Հայաստանն առաջին մեդալն է նվաճել:

Մինչեւ 20 տարեկանների պայքարում Հայաստանի ներկայացուցիչ Սեյրան Խուդանյանը (55 կգ) երկամարտի 216 կգ (95+121) արդյունքով կանգնել է պատվո հարթակի երրորդ աստիճանին եւ դարձել բրոնզե մեդալակիր: Հայ ծանրորդը հրում վարժությունում եւս փոքր բրոնզե մեդալ է նվաճել:

Մ20 տարեկանների պայքարում այսօր Հայաստանի ներկայացուցիչներից մրցահարթակ դուրս կգա Մերուժան Եղոյանը (61 կգ), իսկ Մ23 տարեկանների պայքարում՝ Գառնիկ Չոլակյանը (61 կգ): Հայաստանի հավաքականները մեծաքանակ կազմով են մեկնել մրցավայր՝ Մ20 տարեկանների հավաքական՝ Սեյրան Խուդանյան (55 կգ), Մերուժան Եղոյան (61 կգ), Տիգրան Կարապետյան (67 կգ), Գոռ Սահակյան, Մարտին Պողոսյան (երկուսն էլ՝ 73 կգ), Մնացական Աբրահամյան (81 կգ), Սուրեն Գրիգորյան (89 կգ), Ֆելիքս Գեւորգյան (96 կգ), Գարիկ Կարապետյան (102 կգ), պահեստայիններ՝ Աշոտ Մովսիսյան, Վազգեն Գրիգորյան (+109 կգ):

Կանանց թիմում ընդգրկված են Ալեքսանդրա Գրիգորյանը (59 կգ), Անուշ Արշակյանը (64 կգ), Ալինա Սուքիասյանը (71 կգ), Աննա Ամրոյանը (76 կգ), Էմմա Պողոսյանը (81 կգ), Մարգարիտա Առաքելյանը (87 կգ) եւ Ջուլիետա Ավանեսյանը (+87 կգ):

Մ23 տարեկանների հավաքական՝ Գառնիկ Չոլակյան (61 կգ), Ռաֆիկ Հարությունյան, Կարեն Մարգարյան (81 կգ), Գեւորգ Ղահրամանյան (89 կգ, պահեստային), Արա Աղանյան (96 կգ), Պետրոս Պետրոսյան, Յաշա Մինասյան (երկուսն էլ՝ 109 կգ), Լիանա Գյուրջյան (87 կգ), Լուիզա Սահրադյան, Մերի Թումասյան (+87 կգ):

Եվրոպայի երիտասարդական առաջնությունն անցկացվում է հուլիսի 23-ից օգոստոսի 3-ը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՎԱՆԴԱԼԻԶՄ՝ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՔՈՂՈՎ

«Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Հողեր գյուղի Կավաք վանքը, երբ անցավ ադրբեջանական բանակի հսկողության ներքո, 1992 թ. վանդալները ոչնչացրեցին եկեղեցու մուտքի՝ 1742 թ. շինարարական արձանագրությունը, իսկ այժմ՝ 2023 թ., երբ վանքը նորից անցել է վանդալների հսկողությանը, նրանք վանդալական ոճով «վերանորոգում» են նույն շքամուտքը»,- ֆեյսբուքյան իր էջում գրել է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի փոխտնօրեն Ռաֆֆի Քորթոշյանը:

«Հ. Գ. Լուսանկարներում վանքի շքամուտքի արշանագրությունը մինչեւ ոչնչացումը, ոչնչացումից հետո եւ տեղում անճոռնի մի այլ քարի տեղադրումից հետո»,- գրել է նա՝ լուսանկարներ հրապարակելով վանքից:

«ԲԱՐԲԻ»-Ն՝ ՀԱՋՈՂՎԱԾՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Գրետա Գերվիգի «Բարբի» ֆիլմը համաշխարհային կինովարձույթում պրեմիերայի առաջին հանգստյան օրերին վաստակել է 377 միլիոն ԱՄՆ դոլար. արդյունքում այն դարձել է երբեւէ կին ռեժիսորի կողմից նկարահանված՝ համաշխարհային կինովարձույթում ամենահաջողված պրեմիերան ունեցած ֆիլմը. հայտնում է The Guardian-ը:

Հյուսիսամերիկյան կինովարձույթում (ԱՄՆ-ն եւ Կանադան) «Բարբի»-ն զբաղեցրել է առաջին տեղը՝155 միլիոն դոլարի տոմսերի վաճառքով:

Միջազգային կինովարձույթում «Բարբի»-ն վաստակել է 182 միլիոն դոլար:

Մինչդեռ, «Բարբի»-ի՝ կինոսեզոնի «մրցակիցը»՝ Քրիստոֆեր Նոլանի «Օպենհայմերը», համաշխարհային կինովարձույթում հավաքել է 174 մլն դոլար:

● *Օգոստոսի 3-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՆՊԱՍՏ

ՀԱՐՑ. Ո՞ւր պետք է դիմի խաղաքաղաքացին պետական նպաստ ստանալու համար:

Մանվել Ղազարյան (62 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մինչեւ 2 տարեկան երեխա խնամող անձին պետական նպաստ է նշանակվում ԱՀ արդարադատության նախարարության կողմից ԱՀ աշխատանքի, սոցիալական եւ միգրացիայի հարցերի նախարարությանը տրամադրվող՝ ծննդյան պետական գրանցումների մասին տեղեկատվության հիման վրա:

ԱՀ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 18 տարին չլրացած անձին պետական նպաստ նշանակելու համար պետք է դիմել երեխայի ծնողի կամ խնամակալի մշտական հաշվառման վայրի, իսկ ԱՀ պաշտպանության բանակի շարքերում զինվորական ծառայություն անցնող՝ ԱՀ-ում մշտական հաշվառում չունեցող ծնողի դեպքում՝ նրա ծառայության կամ փաստացի բնակության վայրի՝ ԱՀ աշխատանքի, սոցիալական եւ միգրացիայի հարցերի նախարարության սոցիալական ծառայության տարածքային գործակալություն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԲԱՆԿ

ՀԱՐՑ. Ո՞րն է MasterCard եւ Visa քարտերի տարբերությունը:

Հարություն Ջոհրաբյան (20 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. VISA եւ MasterCard վճարային համակարգերի միջեւ էական տարբերություն չկա:

«Էվոկաբանկ»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երկու քարտերն էլ միջազգային վճարային համակարգեր են, որոնք գործում են ամբողջ աշխարհում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները ժամանել են Կոռնիձոր: Նրանց ուղեկցում է Հայաստանի ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանը, նաեւ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Նրանք դիվանագետներին հեռվից ցույց են տալիս սահմանը, իսկ բեռնատարները գտնվում են ճանապարհին կանգնած:

Նշենք, որ արդեն երրորդ օրն է, որ 400 տոննա հումանիտար բեռով 19 բեռնատարները կանգնած են Կոռնիձորում եւ սպասում են ռուսական խաղաղապահների ու ադրբեջանական կողմի արձագանքին, որ մուտք գործեն շրջափակված Արցախ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 + 16 +28 + 33
Կոտայքի լեռներ	+12 + 15 +28 + 32
Կոտայքի նախալեռներ	+19 + 21 +34 + 36
Գեղարքունիք	+12 + 16 +27 + 32
Լոռի	+14 + 17 +25 + 28
Տավուշ	+16 + 21 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+12 + 15 +27 + 30
Արագածոտնի նախալեռներ	+18 + 23 +33 + 38

Արարատ	+22 + 24 +38 + 39
Արմավիր	+21 + 23 +38 + 39
Վայոց ձորի լեռներ	+13 + 15 +28 + 30
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 24 +37 + 39
Սյունիքի հովիտներ	+18 + 22 +37 + 39
Սյունիքի նախալեռներ	+14 + 18 +28 + 31
ԼՂՀ	+19 + 23 +35 + 39
Երեւան	+21 + 23 +36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.7.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*